ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Ծանուցմանց տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. Երեքեակի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։
Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Rédaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
—
Գրութիւններ ետ չեն տրուիր
Արտասահմանի ձեռք)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռք)(15 ՍԱՆԹԻՄ)(

R. P. Kalémcarian Mechitharistangasse W. 4 Vienne (Autriche)

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Պոլսի ազգային պաշտօնական շրջանակներում խնդիր է յարուցվել Բուլղարիայի հայ գաղթականութիւնը առանձին թեմի վերածել, որպէս զի բուլղարահայերը կանոնաւոր առաջնորդ ունենան։

Ինչպէս իրեւում է Պոլսում համոզուել են վերջապէս՝ թէ զանազանակերպ և ապիկար այցելու հովիւները բուլղարահայ գաղութին ոչ միայն դրական օգուտ չեն կարողացել բերել, այլ և շատ վնասներ են հասցրել։

Առաջնորդներից շատերն էլ բարի պտուղներ չեն լինում, բայց առաջնորդների և այցելու հովիւների մէջ այն տարբերութիւնը կայ, որ առաջնորդին ժողովուրդն է ընտրում, իսկ այցելու հովիւին ուղարկում են բարձր. հոգեւոր իշխանութիւնները իրենց քէֆին համեմատ, առանց ժողովրդի տրամադրութիւնը հարցնելու։

* * *

Բուլղարահայերի դպրոցները ու եկեղեցիները անկանոն վիճակի մէջ են գտնվում, դժբախտաբար ժողովուրդը դեռ ընդունակ չէ այդ գործերը կանոնաւորելու, դրա համար էլ խելքը գլխին առաջնորդի պէտքը իսկապէս շատ զգալի է։

Ուրեմն պատրիարքարանի կամ կրօնական ժողովի մտադրութիւնը գնահատելի է, բայց ժողովուրդն էլ պէտք է աշխատի գործ դնել իր իրաւունքները, այսինքն որոշ դեր խաղալ ապագայ առաջնորդի ընտրութեան գործում.

Եթէ առաջնորդութեան խնդիրը դրական կերպով լուծվի, Բուլղարիայի հայերը պարտաւոր են մեծ ջանքեր գործ դնել մի լուսամիտ, արժանաւոր և գործունեայ առաջնորդ ընտրելու. մի առաջնորդ, որը ընդունակ լինի երկրում գտնվող լուսամիտ հայ տարրի հետ ձեռք ձեռքի տալ և մեր դպրոցական գործերը բարեկարգել։ Բուլղարահայերի համար ամենակենսական խնդիրը դպրոցն է. Նոր ընտրուելիք առաջնորդի առաջին գործը պէտք է լինի դպրոցները հաստատուն հիմերի վրայ դնել. քահանայական, տիրացուական խնդիրները շատ չնչին տեղ պէտք է բռնեն մեր ապագայ առաջնորդի ծրագրի մէջ.

Այս թող հասկանայ ժողովուրդը և ըստ այնմ վարվի իր ընտրութեան մէջ. ծերացած, եռանդը մարած, ուղեղը լղկած եպիսկոպոսը կամ վարդապետը միայն բեռ կարող է լինել ուրիշ ոչինչ, ուրեմն և այդ տեսակներին չը պէտք է ընտրել։

Ժամանակի պահանջները, երկրի պայմանները, ժողովուրդի վիճակը պէտք է աչքի առաջ ունենալ և նրա համեմատ առաջնորդ ընտրել։

ՎԱՐԴՕ

ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ամերիկայի «Հայրենիք»ը իր 92 (Ապրիլ 13) թիւին մէջ երկու մխիթարական կէտեր կը պարունակէ, որոնք առատաձեռն՝ բայց դեռ միամիտ Ամերիկահայ գաղութին սթափման և կամաց կամաց դէպի լոյսը, անկեղծն ու օգտակարը ձգտելուն դրական ապացոյցը կարելի սեպել։

Առաջինը՝ հայ օրիորդի մը — Օր. Աղաւնի — «Մեր ընելիքը» վերնագրով գեղեցիկ մէկ յօդուածն է, որ օրիորդը հակիրճ կերպով ամփոփած է կնոջ դերը ընդհանուր ազգերու հին և նոր պատմութեան մէջ։ Դառնալով մեզի, ան երկու տողով փաստած է հայ կնոջ մեր լեզուն և ազգութիւնը պահելուն գլխաւոր սատարը ըլլալը, բացատրած է Վարդանանց պատերազմներու մէջ հայ կիներու կատարած դերը, և գալով մեր ներկայ կեանքին, Օր. Աղաւնի շարունակած է իր յօդուածը այսպէս.

«Բայց այսօր հայ կինը ամբողջովին ըմբռնած չէ իր պարտականութիւնը դէպի մեր ազգին ներկայ նուիրական գործը — յեղափոխութիւնը։

Եղան, այո, «մեծ» կիներ մեր յեղափոխական գործին մէջ, բայց թիւով շատ քիչ էին անոնք։

Անոնք մեր առաջգնացները եղան և ճամբայ բացին քալելու։

Սօսին, Սերոբ-Աղբիւրի կինը, պատերազմողի մը ոգին ցոյց տուաւ իր այնքան աննկուն կամքովը։ Սասունցի կինը ժայռերու ծայրերէն ինքզինքը վար կը նետէ մեռնելու ու իր պատիւը փրկելու։ Պոլսի մէջ յեղափոխական գործունէութեան կաջակցին հայ օրիորդներ և կիներ։ Ու այս ամէնը ցոյց կուտան թէ մայր երկրի մէջ հայ կինը անտարբեր եղած չէ իր «պարտականութեան» հանդէպ։

Բայց ի՞նչ կ'ընենք մենք, արտասահմանի հայ օրիորդներս և կիները։ Ատենը չէ՞ որ սկսինք մեր քաջալերութիւնը և աջակցութիւնը դնել մեր յեղափոխական ուժին քովը։ Դէ՜հ, ուրեմն, քոյրեր, ալ հերիք է համբերել. Հայրենիքի մէջ հայ գեղեցիկ սեռը բարբարոսութիւններու նողկալին կը կրէ. ան նոյնիսկ տունէն դուրս ելլելու չի համարձակիր առանց երեսը քօղով մը ծածկելու։

Այս տառապողներու աղաղակն է որ մեզի օգնութեան և վրէժի կը կոչէ։ Ալ չի տնտնանք. մեծ դեր ունինք կատարելիք...

Եթէ ամէնքնիս չենք կրնար Սօսիներու պէս զէնք կրել, գէթ կրնանք Սօսիներու համար զէնք գնել»։

Կը ցանկայինք հայ կինը տեսնել այն բարձրութեան մէջ՝ ինչպէս յօդուածագիր օրիորդը կը բաղձայ տեսնել, և Օր. Աղաւնիի խօսքերը գոնէ լաւ և օգտակար օրինակ մը ըլլար մեր արտասահմանի իգական սեռին։

* * *

Երկրորդ մխիթարական կէտն է Փրովիտէնսէն թղթակցութիւն մը՝ զոր հոս կարտատպենք.

«Ապրիլ 7ի (Ը. Ե.) կիրակի գիշերը քաղաքիս Դաշնակցական կօմիտէն հրապարակային ժողով մը ունեցաւ, ուր խօսեցան Պ. Ա. Լեւոնեան նիւթ ունենալով «Յեղափոխական գործը»։ Ատենախօսութիւններէն ետք, յեղափոխական գործին համար հանգանակութիւն տեղի ունեցաւ և 17 վայրկեանի մէջ 421 տօլար հաւաքուեցաւ։ Հանգանակութիւնը դեռ պիտի շարունակուի առանձին շրջանակներու մէջ։

Զինայելով որ երեք շաբաթ հետզհետէ հանգանակութիւններ տեղի ունեցած էին, անօրինակ յաջողութիւն մը ունեցաւ այս վերջինը և գերազանցեց բոլոր միւսները։

Ներկաներէն ծերունի մը, որ միշտ յեղափոխականներու համար սկեպտիկ դիրք մը ունեցած էր, կըսէր ան գիշերը. «Ախպա՛ր, հիմա ա՛լ համոզուած եմ թէ անոնք որ մէկ անգամէն 20–25 տօլար կուտան, այդ մարդիկն իրենց անձն ալ կրնան տալ։

Ու այս հաւատքը ամէնունը եղաւ այդ գիշերը։ Հանգանակութեան վերջնական փակումէն ետք կը ծանուցուի ընդհանուր գումարը»....

Ամերիկայի հայերուն այս գովելի քայլը ապացոյց մըն է որ, սկսած են ճանչնալ «Բրօ Արմէնիա»ի, «Հայ բանտարկեալներու» անունները շահագործելով իրենցմէ դրամ կորզողներու ճշմարիտ գոյնն ու նպատակը, և դիմել դէպի անկեղծը, բուն ճշմարիտ յեղափոխական կուսակցութիւնը։

Կը մաղթենք որ, այդ սթափումը որքան կարելի է կարճ ժամանակամիջոցի մը մէջ կատարուի։

...

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿԸ

Քսանհինգ տարի առաջ, ապրիլ 20ին Բանակիւրիշթէի մէջ պուլկարները ապստամբութեան դրօշը բարձրացուցին թուրք բռնակալներուն դէմ։ Ընդհանուր ապստամբութեան օրը մայիս մէկը նշանակուած էր, սակայն

Թուրք կառավարութիւնը իմանալով որ Բանակխուրիշթէի մէջ ապստամբելու պատրաստութիւն կը տեսնուի կսկսի միջոցներ ձեռք առնել զայն խեղդելու համար։

Բանակխուրիշթեցիները, իրենց գործը չը վիժեցնելու համար, նշանակած օրէն աւելի կանուխ կը պարզեն կարմիր դրօշը, ու կը կը բանան Պուլկարիոյ ազատութեան իսկական թուականը։

Պուլկարիոյ ազատութենէն ի վեր, ապրիլ 20ը պուլկար ժողովուրդին համար ամենամեծ տօնական օրն է և մեծ շքով ու ոգեւորութեամբ ամէն տարի կը տօնուի։

Այդ օրն է ուր ներկայ ազատ պուլկարները կը դրուատեն իրենց ազատութիւն պարգեւող անձնազոհ հերոսներուն յիշատակը, այդ օրն է ուր պուլկար ազատ սերունդը կուգայ բարոյապէս պատժել իր հայրերուն՝ «չորպաճիներու» սերունդը, որոնք երբեմն պաշտելի հերոսները, որիկայ, գատարկապորտ, ձրիակեր և այլ աղտոտ մակդիրներով կը մկրտէին։ Ու այդ օրը, երեկ, 25 տարի յետոյ աւելի շքեղապէս կատարուեցաւ։

Բաղդաւոր է պուլկար ժողովուրդը. ան յեղափոխութեան ամէն չարիքները կրելէն յետոյ, ոտացաւ և անոր արդիւնքը, կը վայելէ և անոր պտուղը՝ ազատութիւնը։ Այդ ազատութեան մէջ ան մոռացութեան չի ենթարկուիր և կը յիշէ իր ազատարարները, կը պսակէ անոնց ճակատները, և իր հերոս ազատարարները երբեմն մրոտողներու գարշելի գէմքերը կը մրոտէ։

∴

Հայ յեղափոխութիւնը շատ նման կէտեր ունեցաւ պուլկար յեղափոխութեան հետ. վշտի ու տառապանքի կէտեր։ Միթէ արդիւնքն ալ նման չի պիտի ըլլա՞յ, միթէ մեր չարչարանքն ալ մեր ժողովուրդին ազատութիւնով չի պիտի վարձատրուի՞ն։

Չէ մենք կը հաւատանք որ հայ ժողովուրդին տառապանքները զուր չի պիտի անցնին, կը հաւատանք որ մեր հերոսներուն ու մարտիրոսներուն թուրքի մանգաղով հնձուած կեանքերէն անպատճառ ազատութեան ծառը պիտի ծլի, մեծնայ, ծաղկի և անոր հովանիին տակ հայ ժողովուրդը՝ մաքրուած իր դարեւոր ստրկութեան մէջ ձեռք բերած ախտերէն, նոր կեանքով մը պիտի ապրի և զարգանայ։

* * *

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԻՐԵՆՔ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ ՀԻՄԱ

Գ.

(Տես. նախ. թիւն եւ վերջ)

Սակայն Պ. Զօպանեան մինչեւ հիմա բաւծներով չի բաւականանար, ան կը շարունակէ անընդհատ քակել մերկացումներուն կծիկը. ահա թէ ինչպէս.

Նոր Կեանքին ու Մարտին մէկ խոշոր թերութիւնն ալ Դաշնակցութեան դէմ իրենց մղած պայքարը եղաւ»։

Ու ատ երկու թերթերուն ընթացքը համեմատութեան դնել կը փորձէ Դաշնակցականներու. իբր թէ մղած կռիւներուն հետ, առանց անկեղծօրէն խոստովանելու որ, Դաշնակցութիւնը երբեք Արփիարի պէս արարածի մը ու անոր հետեւողներուն կարեւորութիւն տալով անոնցմով զբաղիլ չէ ուզած. ընդհակառակը Արփիար եւ իր օրկանները սկսած են պայքարը եւ չեղած տեղէն առիթ ստեղծած են կազկանձելու, որոնց գրածներէն քանին դէմ մէկ անգամ ալ պատասխանած չեն։ Եւ կը շարունակէ Զօպանեան ըսելով.

«Իրաւունք չունէր (Արփիարեան) յեղափոխական մարմնոյ (!) մը օրկանին մէջ ամբողջ Դաշնակցութիւնը ներկայացնել իբրեւ գործիք մը ռուս կառավարութեան շահերուն նուիրուած (եւ ասի՝ օդային ենթադրութիւններու վրայ հիմնուելով, առանց ոեւէ փաստով իր այդ ամբաստանութիւնն արդարացնելու)»։ Եւ սակայն, եթէ չեմ սխալիր, աս եւ ուրիշ տեսակէտներով, Պ. Զօպանեան ալ Արփիարէն վար չի մնար։

Զօպանեան իր գրուածները մինչեւ հիմա չի հրատարակելուն համար ա՛յնքան ծիծաղելի պատճառաբանութիւններ մէջտեղ կը նետէ, որ արժանապատուութեան ամենատարրական զգացում ունեցող մէկը թերեւս ամչնար բերան առնելու. ու աս պատճառաբանութիւններուն շարքին մէջ է նաեւ Արփիարին յաճախակի տուած հրաժարականները։ Այս մասին Պ. Զօպանեան կըսէ.

«Ամէն անգամ որ յեղափոխական (!) վարիչի դերը կատարելու իր անկարողութեան մասին կարծիք յայտնուած է իրեն, իմ կամ ուրիշներու կողմէ, Արփիարեան միշտ համաձայն ցուցուցած է ինքզինքը այդ կարծիքին, եւ յայտարարած է թէ՝ մտադիր է քիչ օրէն «քաշուիլ», եւ երեք չորս անգամ ալ իրօք հրաժարական տուած է. . . . լրջօրէն հրաժարիլ ուզող մարդը իր հրաժարականը կուտայ կը քաշուի (*) . . . Արփիարեանի հրաժարականները, արտասովոր եղերերգութեան մը շեշտերովը գրուած, միշտ ուզած են ըսել իր ընկերներուն՝ «Ո՛հ. կը բաժնուիմ ձենէ անհուն կսկիծանքով, եւ չէք գիտէր ինչպէս կը տառապիմ ձենէ զատուելուս . . .»։ Բնականաբար (!) հրաժարականը միշտ մերժուած է, եւ Արփիարեան միշտ հաւանած է իր պաշտօնին վրայ մնալ վերստին»։

Զօպանեանի հետեւեալ պարբերութիւնները Կեդրոն-Արփիարին ինկած ըլլալը եւ անոր խնկարկուներուն կոյր հետեւող մը ըլլալը յստակօրէն կը պարզէ.

«. . . Ամբողջ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը կը նկատէ իբրեւ ԿԹԱՆ ԿՈՎ մը Նոր Կեանքին, այսինքն իր ԽԱՆՈՒԹԻՆ համար. Այս պայմաններուն մէջ Նոր Կեանքի խմբագրապետին գէմքը ինծի կերեւայ իբրեւ մին այն գէմքերէն զոր Նրօա գծեց իր «Մակարոյծներ»ու շարքին մէջ (**). եւ հիմա ոեւէ է խղճահարութիւն (կեցցէ՛ համբերութիւն!) չի մնար այլեւս ինծի՝ ամբողջ մտածածս յայտնելու գործիչի մը հանդէպ որ չի գործեր, այլ թերթի մը մէջ տեղաւորուած՝ իրեն ու մարդիկը (***) ԱՊՐՈՒՍՏԻ եւ ԶԲՕՍԱՆՔԻ առարկայ կը դարձնէ իրեն»։

Եւ իրօք, Պ. Զօպանեան այլեւս առանց խղճահարուելու! ելնելով աւետարանական ներողամտութենէն, ա՛լ աւելին կըսէ իր յօդուածին վերջերը, որուն շարժառիթը եղած է Նոր Կեանքի սեպտեմբեր 15 թիւին «Մեզի կը նային» վերնագրով յօդուածը։ Ասկից յետոյ Զօպանեան-Արփիարեան յարաբերութիւնները այնքան լարուեր է որ, սկսած են իրարու Պոլիս վերադառնալ առաջարկել։ Նախապէս Արփիարեանի կողմէ Զօպանեանի եղած աս առաջարկին ահա՛ թէ ինչ կը պատասխանէ այս վերջինը.

«Արփիարեան չի՛ խորհիր որ, մենէ մէկուն Պոլիս դառնալը (եւ հետեւաբար Արփիարեանի նմանուող մէկ արարքը կրկնելով Սուլթանին «ՄԵՂԱՅ» ըսելու) լո՛կ գաղափարն ունենալը ո՛

(*) Եւ լրջօրէն հրաժարեցնել ուզողն ալ առանց այլեւայլի կը վռնտէն մէկ խօսքով։

Ծ.

(**) Աղուոր բա՛ն . . . իրենց բերնով եւ իրենց թերթով իրենց զզուելի անձին նկարագրութիւնը . . .

Ծ.

(***) Իր կոյր հետեւողները անշուշտ . . .

Ծ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԴԻ ԵՒ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻՑ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Իմ շատ սիրելի «Կարին» ֆեզ եմ նւիրում առաջին քաղաքական յօդւած դատախօսութիւնս. որովհետեւ ոչ ոք այնքան չէ ազդել իմ քաղաքական զգացողութեան վրա, որքան դու։

III

Ես աշխատեցի այս համառօտ, անշուշտ եւ շատ թերի, տեսութեան մէջ գծել կովկասեան հայութեան կազմի եւ դասակարգային ներհակութիւնների ամփոփ համայնութեան պատկերը եւ տալ ձեզ այսպիսով այն միակ վստահելի մեկնակէտը որը պէտք չէ երբէք աչքից թողնել կովկասահայ խնդիրը եւ ապագայի շարժումը քննելու ժամանակ, որին եւ անցնում եմ այժմ.

Բայց մի՞թէ տարօրինակ չէ մի ինչ որ կովկասահայ խնդրի մասին գրուցելը! մի՞թէ Ռուսաստանում լեհական եւ ֆինական խնդիրների կողքին գոյութիւն ունի եւ մի հայկական խնդիր! մի՞թէ Անդրկովկասի հայութիւնը կարողացել է արտադրել այնպիսի տարրեր, որոնք ոեւէ խնդիր յարուցանելու եւ այն իր լուծումին մղելու հասունութիւնն ունենային, ինչպէս լեհական սօցիալ դեմոկրատին եւ դեմոկրատին, ինչպէս Ֆինլանդիայի քաղաքային եւ գիւղական միջին դասակարգերը։

Ստիպւած եմ խոստովանելու որ կովկասահայ խնդիրը իր ամենից սկզբնական փուլի մէջն է գտնւում տակաւին անգիտակից տրտունջների փուլի մէջ, ու չունի լեհականի եւ ֆինականի փառաւոր անցեալը, անոնց որոշութիւնը եւ դրօշակակիր տարրերը, բայց իմ խորին համոզումս է որ երկրի տնտեսական զարգացումը եւ ռուս կառավարութեան քաղաքականութիւնը կօգնեն մեզ շուտով թեւակոխելու մեր խնդրի աւելի բարձր, այն է գիտակցութեան եւ բողոքի, ապա քաղաքական կազմակերպ շարժումի փուլը։

Կովկասահայ տրտունջները հիւսւած են մի շարք սերտ կերպով իրար մէջ ընդելուզւող նիւթական եւ զուտ գաղափարական տարրերից եւ արդիւնք են, ինչպէս իսկոյն եւ երբ կը տեսնենք, այն հանգամանքի, որ մեր երկրի պետական եւ վարչական հիմնարկութիւնները հայ ժողովուրդի մեծամասնութեան պահանջներին եւ ոգուն չեն համապատասխանում։

Ամէն մէկից եւ ամէն տեղ կարող էք լսել, որ լեզուն ազգայնութեան էական պայմաններից մէկն է։ Բայց ո՞ր լեզուներն են կարողանում ընդհանուր մրցումի մէջ պահպանել իրենց գոյութիւնը եւ զարգանալ։ Ի հարկէ ամենից օգտակար լեզուները, որոնք կարող են ամենից քաղաքակիրթն ու ճոխը չը լինել։ Ինչու կանգ է առել ռուսահայ լեզւի զարգացո՞ւմը, ինչո՞ւ ռուսահայ մամուլն ու գրականութիւնը այնքան հեզ վիճակի մէջ են. ինչո՞ւ հայ մտացի դասի ներկայացուցիչները երկու հայերէն բառ իրարու ետեւից չեն կարողանում արտասանել եւ հայ աշակերտը այնքան մեծ ձգտում է ցոյց տալիս ռուսերէնը սովորելու իսկ մայրենի լեզուն անխնամ է թողնում։ Որովհետեւ ռուսերէնը հացի եւ գիրքի դուռն է բանում, որովհետեւ իմաստուն կառավարութիւնը հոգացել է հայերէնը անօգուտ դարձնելու, տալով մեզ ռուս դատարանական, ոստիկանական եւ դպրոցական հիմնարկութիւններ, ռուս քաղաքային վարչութիւններ եւ պահանջելով որ երկրի բոլոր հիմնարկութիւնների մէջ, պետական թէ մասնաւոր, գործածութեան լեզուն ռուսերէնը լինի եւ ոչ թէ տեղական ժողովրդականը։ Որովհետեւ ժամանակակից ընկերութիւնների մէջ, ուր պետութիւնը իր անհամար հիմնարկութիւններով վարում է հանրային ամբողջ կեանքը, պետական լեզւի կողքին ուրիշ լեզուներ կարող են միայն քարշ քաշել իրենց գոյութիւնը եւ ոչ առաջ երթալ։ Ուրեմն ե՞րբ կարող է հայերէնը նորից զարգանալ։ Բնականաբար այն ժամանակ միայն, երբ ռուս կառավարութիւնը կը դադարի մեր երկրի հիմնարկութիւնները վարելուց, երբ հայ երկրի մէջ մենք կունենանք հայ հիմնարկութիւններ ժողովուրդի ձիրքով ստեղծւած եւ անոր պահանջներին ծառայող։

Հայ ժողովուրդին օտար, հայ ժողովուրդին թշնամի ռուս կառավարութիւնը միասին խլեց մեզանից

թէ անպատուաբեր այլ մահացուցիչ բան մը պիտի ըլլար։ Զի պիտի զարմանամ եթէ այդ տողերէն հետեւցնողներ ըլլան թէ՝ Արփիարեան կուզէ ժողովուրդը Պոլիս դառնալու գաղափարին պատրաստել, որպէս զի ԻՆՔԸ ԳՈՐԾԱԳՐԷ ՉԱՑՆ եւ՝ պարապ գաները հերեն...» (Աստուած թո՛ղ լսէ ձայներնիս)։

«Եւ պարագաները սկսած են զինքը հարկադրել։ Իր շեփորածին չափ ամէն ու հիսոր ըլլալի հեռու է իր «կեդրոն»ը։ Մի՞ թագելի չէ՞ք գտներ Սուլթանին դէմ որոտացող յեղափոխական (!) պետ մը, որ կը պարծենայ թէ... Նոր կեանքին յառաջիկայ տարեկանը ապահոված է եղեր։ Եւ զարմանալի չէ՞ք գտներ որ այդ նոյն «պետ»ը իրեն հպարտութեան տիտղոս մը կը համարի՝ «Կեդրոն»ի մը վարիչն ըլլալով հանդերձ՝ պատառ մը հացի ԱԽՐ ԺԱՇԱՆ ըլլալը։ Եթէ Արփիարեան գործելու համար Պոլիսը կամովին ձգած անհատ մը ըլլար եւ առանց ո եւ է զօմիթէի պատկանելու աղքատութիւն ու անօթութիւն յանձն առնէր՝ դատին համար, իր թշուառութիւնը յարգելի պիտի ըլլար անշուշտ։ Բայց Հնչակեան կուսակցութեան վարիչի մը համար յանցանք մըն է առանց հասոյթի մնացած ըլլալը, որովհետեւ ատի կը յայտնէ ո՛չ թէ զոհաբերութիւն, անշահախնդրութիւն, եւ ուրիշ աւետարանական առաքինութիւններ որոնցմով Արփիարեան իր ճակատն այնքան հաճոյակատարօրէն կը պսակէ, այլ պարզապէս յոռի վարչութիւն, թոյլ գործունէութիւն, կազմակերպութեան պակաս, ժողովրդին վրայ ազդելու եւ անկից գործելու համար հարկաւոր եղած նիւթական ուժն ընդունելու անկարողութիւն։ Յեղափոխական լուրջ ընկերութիւն մը պէտք է որ դրամ ունենայ, առանց սուր՝ անհերելի է որ շարունակէ գոյութիւն ունենալ։ որովհետեւ «քաղաքինաժ» մը կրնայ իր գոյութիւնը՝ առանց ուժի։ Ու երբ կը մտածենք որ Արփիարեանի անձնական վարմունքը մէկն է այն պատճառներէն որ այդ տկարացմանը հասուցին Հնչակեան կուսակցութիւնը, իր մեղապարտ չքաւորութիւնը պարծենցող այդ վարիչը մեզի անիմաստ կերեւայ։ Եւ երբ հացի պատառ մը գտնելու համար քսան կտոր եղող այդ պետը իր թերթին մէջ տնտեսական տագնապէ մը տասը օր յետոյ կը գոռայ թէ «ահագին ուժ մը պատրաստ կայ իր ձեռքին տակ եւ թէ ռազմական անհագնավիթխար ծրագիր մը գործադրելու պիտի սկսի քիչ ատենէն (!)», այդ պետը «ֆարսէօր» մը միայն կարելի է նկատել։

«... Եթէ պարագաները փայլուն ըլլային, Արփիարեան նոր կեանքին համար վար դրած չէր ըլլար այն գումարը զոր Ամերիկայի մասնախումբը զրկած էր որպէս զի Արզուեան Ամերիկա մեկնէր...։ Այս պայմաններուն մէջ, Արփիարեանին այլ եւս բնաւ պատճառ մը չի մնար նոր կեանքի հրատարակումն ապահովուած ըլլալուն համար պարծենալու»։ Մանաւանդ կրկին Զօպանեանի ըսելովը՝ «Ամերիկայէն գալիք քանի մը բաժնեգրի կը սպասէ անձկալից տպագրութեան ծախքերը հոգալու համար նոր կեանքին որուն վերջին շրջանը թիւը երկուքի մէջ ամփոփուած էր խնայողաբար»...

* * *

Ահա Զօպանեանի գրածներուն ամփոփումը, զոր սեկնելու պէտք չը կայ։

Ինչպէս ըսինք, ոչ մէկ պատճառաբանութիւնով չի կրնար արդարացնել իր գիտցածները այսքան ուշ հրապարակելուն համար։ Զօպանեան Պոլսէն գիտէ եղեր Արփիարին ի՛նչ ըլլալը—ու լուռ է... Արտասահմանի մէջ ալ ամէն բան դիտէ եղեր, եւ փոխանակ հրապարակելու՝ զայն բուռն կերպով ալ պաշտպանած է։ Եւ ասոնք ամէնը մէկ քառով միայն կրնանք որոշել—ՈՃԻՐ։

Ու եթէ Զօպանեան գիտնար որ, դեռ Անահիտին երկու թիւը հրապարակ չելած, զինքը սիրող Արփիարականները սկսան տարաձայնել—Զօպանեանը «չօճուխ» է, իր գրածները ցրուելէն վերջը նոյնը աւելի ուժով, աւելի լայն շրջանակի մէջ կրկնելով, եւ եթէ գիտնար որ կրսեմ, զինքը ամենէն աւելի պաշտող մէկը, Անահիտի երկու թիւը առնելուն պէս առանց վայրկեան մը կորսնցնելու գրած է Արփիարին որ «բան մը անգամ չը զիջանի պատասխանելու» իրեն, ինչպէս որ ալ եղաւ, այն ատեն կըսեմ, թերեւս իր գիտցածները աւելի մանրամասնօրէն յայտնէր առանց վերապահութեան, խոստովանէր թերեւս անոնց հակայեղափոխական ըլլալն ալ... Եւ սակայն հասկցողին համար աս ըսածներն ալ բաւական է։ Ու ժողովուրդը անոնցմէ ալ որոշ կրնայ բմբռնել յեղափոխութիւնը հարուածողներուն, իր տգաստագրութեան գործը «մատի վրայ խաղցողներուն» դատաճանական միտումները...։

* * *

ԱԼ ՊԱՐԶ Է

Վառնայի «Իրաւունք» թերթը առաջ սովորաբար յարձակումներ կը գործէր Վարդօի կամ քանի մը ուրիշ դաշնակցականներու դէմ, միշտ յայտարարելով որ ինք ոչ թէ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ է, այլ տնոր քանի անդամներու... sic!

Հ. Յ. Դաշնակցութեան Երկու պատուիրակներուն Վառնայ գալէն և յաջող հանդգնակութենէն ետքը ալ «Իրաւունք»ին կեղծութեան ու ստութեան վերջակէտը դրուեցաւ։

Հայերէն «Հուզուգ» ասպետութիւնը ունեցաւ իր վերջին թիւերուն մէջ ամէն բան մէկդի թողուլ և իր բուռ հարուածները ուղղակի Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ուղղել։ Ատով ան պաշտպան հանդիսացաւ միայն քանի մը ժլատ հարուստ հայերու, որոնք իրենց ոսկիներէն բաժնուելու վախէն այնքան ստորնացան, որ զրպարտութեան դիմեցին, դրամ հանգանակող յարգելի պատուիրակին ոստիկանութեան յանձնեցին և ներքին գործոց նախարարի առջեւ ալ հեռագրով զրպարտեցին թէ իրենցմէ բռնի դրամ պահանջեր են։

Սակայն պուլկար կառավարութիւնը գործը քննելով՝ ճանչցաւ զրպարտիչները և մեր բարեկամները հանդիստ թողուց։

Եւ ահա այս զրպարտիչ աղաներու փաստափան «Հուզուգ»ը տեսնելով որ Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող անհատներու դէմ եղած բոլոր յայտնի և գաղտնի ոտնձգութիւնները ապարդիւն կանցնին, սկսած է ճիգեր թափել արատաւորելու ամբողջապէս այն կազմակերպութիւնը, որուն շարքերէն զոհուած այնքան թանկագին զոհերու մէկ մասին դէմքերը՝ այսօր ամփոփուած «Դրօշակ»ի յօբելեանական հատորին մէջ՝ կը գտնուին հայ հասարակութեան աչքին առջեւ։

* * *

Այսօր ուրախ ենք յայտարարելու որ «Իրաւունք»ի բոլոր հակայեղափոխական քարոզները ապարդիւն կանցնին։ Վառնայի անկեղծ հայրենասէրները ամենայն սիրով իրենց նպաստները տուին մեր ազատագրութեան գործի համար և պիտի տան։

Բայց հետաքրքիր է հասկնալ թէ ի՞նչ ըրաւ այն «Ինչանաւոր հայրենասէր» երիտասարդներու խումբը որ մտքեր պղտորելու նպատակով ինչ որ «յանձնախմբի խնդիր մը յարոյց, և որուն պաշտօնական արդէն գերեզման է իջեցրել իր մանկութեան օրերի առանց այն էլ շատ չափաւոր ագդասիրութիւնը, թօթափել է վերջապէս պատուական «խակ ցնորքներ» եւ կառավարութեան ու գահի ամենից հաստատուն սիւներից ղէկը դառնալու հասունութիւնն ունի արդէն։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ կառավարութեան բոլոր մտահոգութիւններն ու զուրգուրանքները ասոր են պատկանում եւ մեծ անխոհեմութիւն ու ապերախտութիւն կը լինէր հայ բուրժուազիի կողմից, եթէ փորձէր դիմադրելու այնքան փափկանկատ եւ բարեացակամ ռուս կառավարութեան։ Ընդհանուր շահերի ամուր կապերով միացած են այդ երկուքը։ Թէ մէկի եւ թէ միւսի նշանաբանն էլ նոյնն է՝ Ռուսիայի անխաղտ ամբողջութիւնը եւ երկրի ներքին խաղաղութիւնը։ Ռուսիայի ամբողջութիւնը երկուքի գոյութեան ամենանհրաժեշտ նախապայմանն է, որովհետեւ հակառակ դէպքում ո՞ւր պիտի ռուս կառավարութիւնը տեղաւորէր իր պաշտօնեաների լեգէօնները եւ հայ բուրժուազին իր ապրանքները։ Միւս կողմից թէ մէկը եւ թէ միւսը «խաղաղ մթնոլորդի մէջ միայն կարողանում են լիաթոք շնչել եւ կատարել իրենց շահատակութիւնները։ ոչինչ, եթէ այդ «խաղաղութիւնը» ձեռք է բերուած աշխատաւոր ժողովուրդի քաղաքական անչափահասութեան անկազմակերպ եւ տնզօր դրութեան գնով։

Ուրեմն հայ բուրժուազին չէ այդ տարրը, որ կոչուած է անդրկովկասեան ժողովուրդների քաղաքական անկախութեան եւ պետական հիմնարկութիւնների ռամկավարացման առաքելութիւնը կատարելու, այլ այդ ժողովուրդների քաղաքականապէս հալածուած եւ տնտնապէս կեղեքուած աշխատաւոր դասերը։ Ռուս կառավարութեան հարկային եւ առհասարակ ամբողջ տնտեսական քաղաքականութիւնը, պետական հիմնարկութիւնների մէջ իշխող ցեղային եւ դասակարգային ոգին, ինդուստրիական եւ կալուածատիրական բուրժուազիի սահման չը ճանաչող կեղեքումները անխուսափելիօրէն մղում են ժողովուրդի աշխատաւոր խաւերը դէպի դիմադրութիւն։ Եւ անչուշտ հեռու չէ այն օրը երբ մտացի եւ կարող ոյժեր կը գտնեն յստակօրէն բանաձեւելու ժողովրդի տրտունջները սոցիալ-քաղաքական կազմակերպ եւ գիտակից շարժման վերածելու։

Վ. ԱՍԼԱՆԵԱՆ

(Շարունակելի)

տօնը պիտի ըլլար դրամ հանգանակել։

Ինչ որ է, ինչ. որովհետեւ այդ խումբին նպատակն էր միմիայն արդարացնել քանի մը վատերու ժլատութիւնը։ Եւ այդ խմբին յանկարծաբորբոք հայրենասիրութիւնը Դաշնակցական գործիչներու մեկնելուն հետ մարեցաւ։

ԻՐԱԳԷՏ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիզի Բարեգործական ընկերութիւնը պարահանդէս մը տալով, ազգային կարօտելոց համար հաւաքեր է 1500 ֆրանք։

— «Բազմավէպ» կը հաղորդէ.

«Ֆրէզնոյի բողոքական և լուսաւորչական ազգայինները խեղկատակ առաջնորդներու ձեռքը մատնուած են։ Առաջնորդ կընաւորին Միլեան և Ալէքսանդրեան անհատներ. առաջինը 8000 տոլար հաւաքեր է ժողովարան մը շինելու համար, բայց այժմ այդ պաշարտ գումարը հալեր է իր բուռին մէջ, երկրորդը ի նպաստ որբերուն նոյնպէս 8000 տոլար ժողվեր է, բայց որբերը ոչինչ չեն տեսած, սակը իրեն այգի մը գնելու ծառայած է։

— Նոյն թերթին խմբագրութիւնը կը հաղորդէ որ «Որբունի» թերթի հասոյթէն 1000 ֆրանք եւս ղրկուած է Պոլսոյ Պատրիարքարանի Որբախնամ յանձնաժողովին, ի նպաստ Թրքահայ որբերուն։

— Կաթողիկոսը Էջմիածնէն ելեր է պտոյտ մը ընելու. պիտի այցելէ Իգտիր, Կողպ, Կաղզուան և Կարս քաղաքները.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն ապրիլ 13 թուականաւ կը հեռագրեն թէ՝ Չինաստան ղրկուելիք թուրք առաքեալները! վերջապէս պիտի մեկնին, վասնզի այդ ճամբորդութեան համար հարկ եղած գումարը հայթայթուած և անոնց տրամադրութեան տակ դրուած է։

— Մասնաւոր նամակներէ կը ստուգուի թէ Մակեդոնիոյ Թէքվէշ քաղաքին մէջ գտնուող պուլկարները չարաչար կերպիւ տանջուած և անխնայ հարստահարուած են թուրք իշխանութեան կողմանէ։

— Վանայ մէջ քրտական չէյխ մը կուսակալ Թահիր փաշային տունը երթալով, անոր վրայ րէվօլվէր կը պարպէ ըսելով «դուն գեավուր ես»։

Պատճառը կուսակալին խաղաղասիրական տրամադրութիւնները են։

Շէյխը անմիջապէս կը ձերբակալուի և կախսուի։

— Սուլթանը ռուս դեսպանին տուած խորհուրդներուն համաձայն Սելանիկի մէջ դատապարտուած պուլկարներուն դատական գործերը պահանջած է և կուզէ պատիժները թեթեւցնել։

— Սրպիոյ դեսպանը նօթայով թուրք կառավարութեան հաղորդած էոր Սրպիա պատրաստ է վաճառականական դաշնագրութեան մասին բանակցիլ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Եւրոպական թերթերը կը յայտնեն թէ Պարսից Շահին առողջութիւնը ծանրապէս վտանգուած է։

— Պարսկաստանի մէջ գրամատուն մը պիտի հաստատուի որ պիտի կառավարուի միմիայն պարսիկներու կողմանէ և դրամագլուխն ալ պիտի ըլլայ լոկ պարսիկներու դրամով։

Մահմետական աշխարհին մէջ եզական և նորօրինակ երեւոյթ մը կը համարեն ասի ֆրանսական թերթերը։

— Շահի հիւանդութիւնը կրկնուած է և բոլորովին բուժուիլը կասկածի տակ է։

ԹՐԱՆՍՎԱԼ

Անցեալ ամսոյ մէջ ժէնէրալ Պօթայի և ժէնէրալ Ֆրէնչի բանակցութիւններու միջոցին երբ Պօթա վերջին տեսակցութենէն յետոյ կը պատրաստուի հրաժեշտ առնել Ֆրէնչէն, այս վերջինը կը պատասխանէ՝ «անօգուտ է աճապարել, ժէնէրալ, վասն զի մեկնելու կառախումբ չը կայ»։ «ո՛չ, կըսէ Պօթա, բայց կեցնելիք կառախումբ մը ունիմ» ու կը մեկնի։

Եւ արդարեւ հազիւ 24 ժամ յետոյ Վանտըրֆոնթէնի մօտերը Պօթայի ձեռամբ կառախումբ մը օդը կելլայ։

Եւրոպական թերթերը պատմելով Պօթայի հաստատամտութեան այս փոքրիկ ապացոյցը, կը զմայլին պօէր ժէնէրալին վրայ և զուարճալի կը գտնեն այս դէպքը, եթէ սակայն կառախումբ մը օդը հանելուն և հոգիներ վառելուն մէջ զուարճութիւն մը կայ։

— Անգլիական կառավարութիւնը 500ի չափ պօէր գերիներ պիտի տեղաւորէ Հնդկաստանի վաւառողջ նահանգներէն միոյն մէջ. Անգլիական թերթ մը այդ վարմունքին դէմ կը բողոքէ։

— Ամերիկայի տէմօկրատներու կողմէն քանի մը երեսփոխաններ Քրիւկէրը Ամերիկայ հրաւիրած են։

— 1000 հոգիէ բաղկացած պօէր զօրախումբ մը յանկարծակի յարձակելով անգլիական վաշտի մը վրայ զայն գերի բռներ է։

— Անցեալ շաբթու պօէրները համախմբուեր են իրենց էն նշանաւոր զօրավարներու հրամանատարութեան տակ Հարթպէստ Ֆոնթէնին քովերը։ Անգլիական ժէնէրալ Պապինկթըն ամբողջ օր մը ռմբակոծեր է պօէրական ամրացած դիրքերը և նահանջել ստիպեր է զանոնք, երկրորդ օրն ալ Պապինկթըն կատաղի կռիւ մղեր է պօէրներուն դէմ Լօնֆօնթէնի մօտերը։

ՄԱՐՈՔ

Մարոքի նախարարապետը Հաճի Մուքթար պին Ապտուլլահ ձերբակալուած և բանտարկուած է Մարոքի սուլթանին հրամանով։

Կըսուի թէ պալատական մեքենայութիւններու արդիւնք մըն է այս դէպքը որ ժողովուրդին վրայ գէշ կերպիւ ազդած է։

ՉԻՆԱՍՏԱՆ

Ռուսիա 50000 հոգիէ բաղկացած, ժէնէրալ Սախարովի հրամանատարութեան տակ, երկու զօրաբաժին կը կազմէ Մանջուրիոյ Երկաթուղիի գիծը պաշտպանելու համար։

ԻՏԱԼԻԱ

Հռովմէն ֆրանսական Ռաբէլ թերթին կը գրեն թէ Իտալիոյ թագաւորը իր հնոյ թագուհիին ծննդաբերութենէն յետոյ պիտի այցելէ Բարէզ, Լօնտրա, Բէթէրսպուրկ Պերլին և... Կ. Պոլիս։

Աչքը լոյս Սուլթան համիտին։

ԿՐԵՏԷ

Հանեայի մէջ ազգային երեսփոխաններու ընտրութիւնները կատարուեր են լիակատար խաղաղութեամբ։

Թէեւ մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն, բայց մինչեւ հիմա ընդդիմադիր կուսակցութիւնը յաղթող հանդիսացած է։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ապրիլ 20ին Պուլկարիոյ բոլոր քաղաքներուն մէջ շքեղ կերպով տօնուեցաւ Ապրիլեան յեղափոխութեան քսանհինգ ամեակը։

Վառնայի մէջ ալ նոյն տօնը կատարուեցաւ. ցորեկին օդը գէշ ըլլալուն պատճառաւ անկարելի եղաւ տօնական ամբողջ ծրագիրը գործադրել, սակայն գիշերը աղէկ անցաւ. քաղաքը լուսավառուած էր և հրախաղութիւն կար։

— Պուլկար թերթերը կը հաղորդեն թէ իշխան Ֆէրտինանտ արտասահմանէն Սօֆիա վերադարձեր է։

— Մակեդոնական Բ. կոմիտէի նախկին նախագահին դատի քննութիւնը յանձնուեր է ուրիշ հարցաքննիչ դատաւորի մը։

ԱՄԵՐԻԿԱ

Մանիլայէն ամերիկացի ժէնէրալ Մաքարթի հեռագրեր է որ մնացած Ֆիլիպինյի հրոսակախումբերը ամէնքն ալ անձնատուր եղեր են։

ԿԸ ՓՆՏՐՈՒԻ

Յովհաննէս Տէր Խաչերեան, Սեբաստիոյ Կովտին գիւղէն, 40 տարեկան միջահասակ, ամուսնացած, 96ի դէպքերէն ի վեր անյայտ։

Տեղեկութիւն ունեցողները թող հաճին հաղորդել Ֆիլիպէ՝ Պ. Վարդանեանի սրճարանը։

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Այս երեկոյ հայ դերասանական խմբին կողմանէ բազմաթիւ ազգայնոց խնդրանաց պիտի ներկայացուի

Վասպուրականի Հերոսներ

անուն թատերախաղը, տաճկերէն լեզուաւ, որուն համար մեծ խնամք և հոգ տարուած է, գիները դիւրամատչելի, տոմսերը այսօրուընէ կը ծախուի մուսալլա Վասպուրականի սրճարանը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ«Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Sof. Վ. Տոտովեանցի եւ Ե. Թոփչեանցի „Die sozial-ökonomich Türcei"

Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Թուրքիայի մասին,

Գինը 2 մարկ ճանապարհածախսով դիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

Отговорникъ:

Д-ръ МЖГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.